## ԽԱՉ

Ի նուէր Ալփ. Լամարդինի անմահական հմբաւոյն և գրաւորական արդիւնաշատ կենացը՝ կ'ընծայենք իրեն շիրմին վրայ՝ միանգամայն իբրև ջինջ հայելի իւր հոգւոյն գովելի զգացմանցն ու յատկութեանց, և իբրև դոյզն պսակ գովեստից և յարգանաց՝ առաջիկայ գեղեցիկ տաղիս հայ թարգմանութիւնը, որ իրեն կրօնական դաշնակութեանցը մէջ ընտրելագոյններէն մէկն է. իսկ մեզի համար քան զայլ ամենն աւելի ընտիր այս պարագայիս մէջ. յորում՝ ինչպէս կը տեսնեն մտադիր ընթերցողք, բովանդակեալ են իրեն ամենայն իղձքն յելս վախճանի մահուն զեղմամբ սրտի, և ամենայն անձկանաք հոգւոյն առ Աստուած. և յորում միտքը կը ծփի ընդ մէջ խանդաղատանաց, յուսոյ և համակամութեան, և 'ի մէջ ջերմեռանդն յիշատակաց լի քաղցրամոք տրտմութեամբ։

Ո՛վ զոր առի ես 'ի շրթանցն ոգեսպառ
Ընդ շունչն յետին և ողջունիւրն վերջնոյ,
Նիշ սուրբ և սուրբ, պարգև ձեռինքն տրկար,
Պատկեր իմոյս Աստուծոյ։

Որչափ լալեաք ոտք քո թացան պաշտելի
Ի ժամէն սուրբ՝ երբ 'ի ծոցոյ վրկային
Մնկար 'ի ձեռս իմ դողդոջուն յերերի
Ի շունչն յետին դեռ ջերմին։

Ջահք սրբբանուէր ցայտէին հուսկ բոցոյ հուր
Մ'ընչեր երէց ղերգըս մահուն քաղցրաձայն.
Հանգոյն զոր կին եղանակէ երգ տրխուր
Ի նիրհ հանգչել անդ մանկան։

Ի ճակատուն կայր հեռք յուսոյն բարեսէր,
Եւ վսեմափառ գեղով փայլեալն ընդ դիմաք
Մահուն շրքեղ վայելչութիւն կընքեալ էր
Վաղանց ցաւոյն շընորհաք։

Գրգռեալ հողմոյն ըզհերարձակն իւր գըլուխ,
Մերթ մերկանայր և մերթ ծածկէր ըզդիմակ.
Որպէս 'ի ծուփ ծածան ըստուերք նոճեաց թուխ
Ցարձան շիրմին ըսպիտակ։

Ի մահագոյժ կախէր մահճաց մին բազուկ
Մ'իւն 'ի սրտին վերայ կըրկնեալ թուլակի,
Եւ գոգ խընդրէր և 'ի շրթունսն առ անձուկ
Պընդէր զպատկեր Ցիսուսի։

Համբուրաշարժ շրթունքն էին կիսամեռ,
Այլ էր թռուցեալ հոգին ընդ սուրբն այն համբոյր.

Ջերդ սըլացիկ խունկ չեւ 'ի հուր կիզեալ դեռ
Ծախ' 'ի բոցոյն սպառըսպուռ։

Ա՜ռ ցուրտ շըրթամբքն հանգչէր համայն ինչ յայնժամ.
Շունչք լըռէին 'ի խոր ծոցոյն Նիրհելոյ,
Եւ հոլովէր կիսով ամփոփ բիբն ական
Ցաչըն թափուրս 'ի տեսոյ։

Եւ երկիւղիւ զանխուլ հարեալ ես յոտին,
Ո՛չ բաւէի առ վեհ Նըշխարն այն մատչել,
Իբր այն մահու թէ վեհութեանըն լըռին
Սըրբագործեալ գնա լինել։

Ոչ բաւէի . . . այլ լեալ ըզգաստ լըռելոյս,
Ցըրտասարսուռ կալեալ մատամբքն ըզխաչիկ
« Ա՜հ' յիշատակն, ասէ երէցն, ը' ահա յոյս,
Կա՛լ, որդեակ իմ, զայսոսիկ »։

Այո՛ դու ինձ կացցես, բաժին տըխրական.
Եօթնիցըս ցարդ մերձ առ շիրման անանուն
Տընկեալ ծառոյս ոստոց սաղարթք փոխեցան.
Դու ոչ լըքեր զիս համբուն։

Ուր ընաւք մաշին, աւա՜ղ, 'ի սիրտ մերձ դու յոյս
Զայդ անմոռաց կալար յաւէտ յամս ամաց.
Եւ շիթ առ շիթ 'ի գիրգ կակուղ փըղոսկր այս
Կընքեցան հետք իմս աչաց։

Սաւառնաթեւ հոգւոյն վերջին դու ընկեր,
Ե՛կ լեր 'ի սիրտ իմ, խօսեաց դեռ ը' ասասջիր
Զոր բարբառէրն՝ երբ ըզմըրմունջ իւր երեր
Դու լոկ համայն լըսէիր։

Ի պահն այն խէթ, մինչ ամփոփեալ յինքն հոգւին
Քօղածածկեալ ըզմեր բըրօք մըթալից
Զոփայ տակաւ զերծ յաղգելեաց մեր ցըրտին
Անլըռող հուսկ ողջունից։

Մինչ գայթ 'ի գայթ 'ի մէջ կենաց և մահու
Ա՜ռ գիշերաւ շիրմին հոգին կախեալ կայ,
Անջատ յոստոյն հանգոյն պըտղոյ մի ծանու
Ի' առ մէն մի շունչ իւր դողայ։

Մինչ երգախառն հեծեծանաց տըրտմութիւն
Զարթուցանեն ոչ այլ զոգւոց մեր թըմբիր,

Մ՛ած 'ի շըրթունս օրհասական անկելոյն ,
Զինչ բարեկամ սիրալիր ,

Զանձուկ շաւղին առ 'ի դիւրել զահափեռ ,
Առ ամբառնալ առ Տէր զաչկունսն աղեկէզ ,
Համբուրելիդ դու մըխիթար երկնաւէտ ,
Զի՞նչ բարբառիս , ասա՛ մեզ ։

Ըզմեռանել գիտես և դու , և յունայն
Աղօթըս քո յահեղամեծ գիշերոյն
Ըզձիթենւոյն ոտս արտասուքդ աստուածեան
Թացին ցայգուէ մինչ յայգուն ։

Առ մեծ խորհուրդս յառեալ քո զակն 'ի խաչէն
Ընդ լալեաց մօր տեսեր ըզսուգ բընութեան .
Ըզսիրելիս թողեր հանդոյն մեզ աստէն ,
Եւ ըզմարմինդ 'ի տապան ։

Լիցի հիքիս վասըն մահուանս այս իցիւ ,
Տալ 'ի ծոցին քում զայս ըզշունչ ցաւագին .
Ո՛վ որ մեռարդ , յիշեա ըզժամ քո լըրիւ
Ի գալ պահուն այն վասն իմ ։

Գըտից ըզվայրն ուր դա շըրթամբք ոգեսպառ
Զանդառնալին մընչեաց ողջոյն ոտից քոց .
Եւ ռահահորդ հոգին զհոգիս իմ թափառ
Ածցէ խուռում Տեառն 'ի ծոց ։

Տայր ոք , ո՛հ տայր , անդ 'ի մահճին իմ տըխուր
Իբրև զուարթուն յարտօսր անդորր և տըրտում ,
Դէմք ցաւազգեաց ոք 'ի շըրթանցս իմ առնոյր
Զօծեալ բաժինս իմ այսգոյն ։

Պընդեա՛ ըզքայլսն և դիւրեա՛ զժամ իւր յետին .
Եւ զրաւըդ սուրբ ակընկալեաց սիրալիր
Գամ քան ըզգամ անց յայնմանէ որ մեկնին
Առ մընացեալսն 'ի յերկիր ։

Մինչև հերձեալ զկամարս հողոյն մըթագին
Զայն ըզմեռեալս կարդայ եօթնիցս 'ի յերկինս .
Եւ զնընջեցեալս թևօք յաւէրժն ընդ խաչին
Զարթուցանէ՛ միասին ։

ԹԱՐԳՄ . Հ . Դ . ՆԱԶԱՐԵԹԵԱՆ

ԼԱՄԱՐԹԻՆ

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ